


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արամասման
Տարեկան Ծրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը: Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ: Երկու ք/ո ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիմ:
Զհրատարակուած գլուխը նս յտուիր:

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

Ի ՆԱՍՏ ԱՂԲԱՏԱԽԱՄԻ

Անցած կիրակի գիշեր ի նպատակ տեղ-
այս Աղբատախնամի տրուած ներկայացման
արդիւնքը բաւական գոհացուցիչ էր: Աղբա-
տախի հասարակութիւնը իր արգիւնաբեր
ներկայութեամբը պատուած էր սոյն երե-
կայթը: Ամբողջ եղած ծախսը զեղչելէ ետ-
քը 20—25 նաբոբէնի գումար մը գոյա-
ցեր է:

Ներկայացուած խաղը թէեւ հին ու
ոչ այնչափ շահեկան, բայց դերակատարը
իրենց ստանձնած դերերը կատարելու են բաց
ի կարողութիւն դերը կատարող պարոնէն՝ որ
տալի դերասանութիւնը իր գիտնալ կարծած
մեջկատակի (բանթովմա) դերասանութեանը
պէս ըմբռնելով՝ նոյնին ձեւերովը ներկայա-
ցուցեր է կարողութիւնը:

Այս բանը ոչ միայն խաղին շուքը կը
նսմանցնէ այլ պատուաբեր չէ՝ ոչ վարպե-
տին և ոչ ալ նորակազմ խումբին համար:
Գիտ՛յլ է տալիս արհեստը, ա՛յլ է բան-
տովմայի արհեստը:

Կը հարցնեն՝ մեկ թէ ի՞նչ կարծիք ու-
նինք այն մէկ երկու անձանց վրայ՝ որոնք
ազգին մէջ բաւական շահատակութիւններ
գործելէ վերջը, այսօր հրապարակաւ «Բե-
ղա՛յ, եղածը եղած է, խելքերնիս գլուխնիս
ժողուեցինք, ասկէ ետքը բարիք պիտի ընենք
ազգին,» ըսելով՝ ժողովուրդը կը ջանան
համոզել:

Ասոր պատասխանն է հետեւեալը:

ԱՌԱԿ



ԿԱՏՈՒՆ՝ ՃՊՆԱԽՈՐ

Կատուն սե վերաբերուով մը ոտքերը
ու ձեռքերը ծածկելով գնաց ըսաւ մեկերուն
թէ, «Ա՛լ ասկէ ետքը ինձմէ մի՛ վախնա՛ր,
համարձակ պտտեցէք ո՛ր թշնամիք նպարեղի-
նաց, զի ես ճգնաւոր եղայ, պահք պիտի

պահեմ ու միս չպիտի ուտեմ. ուստի ա՛լ ձեզի չեմ վնասեր. ես բնութիւնս փոխեցի, խոտ պիտի ուտեմ ու մէկու մը գէշութիւն չպիտի ընեմ. ասկէց զատ, թէ որ տանու-տէրք թակարդներ լարեն՝ ձեզի պիտի իմացունեմ. ասկէ ետքը ինծի համար ծով ու աղօթք:

Միշտ մուկերը հաւատացին և ուրախացան, ու երբ իրենց ծակերէն դուրս ելնել պտտել կը պատրաստուէին, «կեցէք, կեցէք, ըսաւ ծեր մուկ մը, հեղ մը ես ելնեմսս կատուին երեսը նայիմ ու ետքը կըսեմ՝ ձեզի»:

Այս ըսելէ ետքը ծակին բերանը գընաց, ու տեսնելով որ կատուն ձեռքերն ու ոտքերը վերարկուին մէջ ծածկեր խելոքիկ մը նստեր էր, բայց աչքերը դարձեալ առաջուան պէս կը փայլին, կը դառնան ու միշտ դէպի ծակերը տնկուած են:

Փորձառու մուկը լաւ մը գննելէ ետքը հասկնալով որ կատուն զիրենք խաբել կ'ուզէ, «Ասկէ բտքը Աբբա Մարկոսն ալ ըլլաս նէ հաւատացողին խերն եմ անիծեր» կըսէ ու ներս կը քաշուի:

Բարոյական — Փորձեալն կրկին փորձել յիմարութիւն է:



Յառաջիկայ Հինգշաբթի, «գոստոս 14 Պոլսոյ և գաւառաց ահագին և մեծ կոտորածին և տարեգարծն ըլլալով, խմբագրութիւնըս պարտ անձին կը համարի յիշեցնել Հայ ժողովրդեան եւ հրաւիրել Պուլկարիոյ մեր Պատուարժան Թաղ. Խորհուրդները նոյն օրը ի հանգիստ հոգւոց մեր Ս. Նահատակաց՝ յատուկ Պատարագ և Պաշտօն կատարել տալու Ս. Եկեղեցեաց մէջ:

50 ԱՆԳՂԻԱԿԱՆ ՈՍԿԻ

Հինգշաբթի օրը Ուեստմինսթերի Դուբսին կոնմէ տեղւոյս Աղքատախնամին շրջկուած է 50 անգղիական ոսկի, միմիայն Պոլիս վերադառնալ ուղղը կարօտ գաղթականաց ճամբու ծախքը հոգալու համար:

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

ՏՕՆ ՍԷՉԱՐ ՏԸ ՊԱՉԱՆ

Թատերախաղ մը՝ որ միջին դարու ըսպանական բարուց ապականութիւններու մէկ պատկերը կը ներկայացնէ՝ ի նպաստ տեղւոյս Աղքատախնամին տրուեցաւ:

Հոծ բաղմութիւն մը լեցուցած էր սրբաճ ոչ թէ սոյն բարոյալից խաղը տեսնելու անհամբեր՝ որքան Աղքատախնամին օգնելու նպատակաւ:

Սոյն թատերագութեան հեղինակը ըստ Տեար Դերասանագետի՝ Աղեքսանդր Տիւմա է եղեր: Միթէ զարմանալի չէ՞, երբ գիտենք թէ 1793ին Գաղիոյ յեղափոխութեան աւելի զարկ մը տալու համար սոյն օրինակ թատերախաղեր ներկայացնելը արժան դատուած ըլլալով, (որպէս պի ժողովուրդը արքայականաց դէմ գրգռէ,) Մարթէն Տիւպուա՝ Տօն Սէչարը կը հեղինակէր և առաջին անգամ զայն Բօրդ Սէն Մարթէնի թատրոնին մէջ կը ներկայացնէր. այն ատեն Աղեքսանդր Տիւմա դեռ ծնած չէր...:

Ինչ որ է, այս տեսակ թատերախաղեր այն ատեն յարգի էին, իսկ հիմա զուտանք կ'ազդեն հանդիսականաց, վասն զի նորանոր երկեր աւելի իմաստալից եւ բարոյալից են բան Տօն Սէչարի պէս անկապ և բարոյականութենէ զուրկ թատերախաղերը:

Եւ, անկողմնակալութեան դէմ մեղանշած չըլլալու համար պէտք է ըսել որ՝ եթէ

Աղքատանամ ընկերութեան Գործ. Ժողովը. առաջուց սոյն խաղին տետրակը աչքէ անցունելով (որ իր պարտքն էր) նիւթին վերահասու եղած ըլլար՝ ի նպաստ Աղքատանամի զայն չէր հանել տար ի թատերաբեմ: Բայց այս տեսակ գործերու մէջ տոկաւին նոր մտնելէն՝ ներքի է յաջս թատերասիրաց:

Գալով դերասանաց, իրենց ստանձնած դերերը ըստ կարողութեան լաւ կատարեցին, մանաւանդ Տիար Ֆասուլեան. բայց Տօն Կարողոսի դերակատարը փայտէ պէպէքի նըման՝ Քուլխանին ձեռքին տակ մէյ մը առաջ մէյ մը ետ երթալով՝ ձեւերը մնջկատակ խազացողի մը պէս յարածամ շարժուն, ձայնը խռպոտ և թագաւորի ոչ վայել բաղւածք մը ունէր:

Ըստ նոյն թատերագութեան ոգւոյն՝ Տօն Կարողոս վեհանքն, ծանր և ազդու նայուածքով թագաւոր մ'է: Տեսար Գերասանապետը այս կէտերը ուրիշ անգամներ պէտք է աղէկ նկատողութեան առնու, որպէս զի հանդիսականաց դիտողութեանը տեղի չի տայ:

Առաջին արարուածին գոցուելէն ետքը հանդիսականաց մէջ լուր մը տարածուեցաւ թէ՛ խմբապետը՝ Ազգին և Պուլկար կառավարութեան վստահութիւնը վայելող Աղքատանամ ընկերութեան չի վստահելով՝ հակառակ իր կնքած պայմանագրոյն՝ առաջարկեր է դերասանական խմբին տրուելիք վարձքը նոյն վայրկեան իրեն յանձնել, հակառակ պարագային՝ Բ. վարագոյրը չի բանալ սպառնալով, բայց իր այս անիրաւ առաջարկը ըստ օրինի մերժուեր է:

Հատ անգամ, վսեմ զգացումներու տէր եղող մարդու, ազգասէրի և աղքատասէրի դեր կատարող դերասանապետէ մը ասկէ աւելի բան մը չէր սպասուեր:

ՍՈՒՐ

ՀԱՅԵԼԻ

Սոյն ներկայացման առթիւ ՊԻՇԱԿ ԸՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՄԸ քննադական մըն ալ որ ուշ (երէկ զիշեր ժամը 9ին ձեռքերնիս հասաւ,

վերոգրեալին մօտ դիտողութիւններ ընելէն ետքը՝ պատուոյ օթեակին մէջ քիչ անվայել աղմուկներն և հոն բաղմունքներուն ընթացքը կ'այպանէր, զի այդ օթեակէն գաւազաններու, աթոռներու, կանչուրուտութի և ամենանորոգական պարագաներու մէջ եղած կրկնակի ծափահարութեանց վերջը չէ եկեր: Եւ ի վերջոյ կը յարէր. «Մեղք Տալուրիկի տաղաչափութեան, լաւ էր որ այդ երգին հին միմունջներն մեր սրտի ծալքերուն մէջ յօդկ մնչիկ պահուած մնային և անոնցմով միշտ սնանէինք, քան ուրիշներ նորոգել ուզէին անոր շեշտերը և բերններնուն թափթփէին»:

Ժընէվէն կը գրեն թէ Պ. Արշակ 20-պանեան հոն հասեր և բոլոր անդամականաց այցելեր է, որոնք իրենց դժնայանքներուն միջոցաւ առօր փաւօր զայն ձամբուղերը են: Հայ գաղութն ալ մեծ պատիւ ըրեր է. . . երես չի տալով անոր:



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ՔԵԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՄ


ՀԱՒԱԲԱՃՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳ. ԵՐԿԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԳԻՆ 2 ՖՐԱՆԿ

Սոյն երգարանը որուն անհամբեր կ'սպասուէր ժամանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով որդագրուած, բայց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաև բազմաթիւ նոր երգեր:

Փափաքողք պէտք է դիմեն առ Մ. ԽԱՉԻԿԱՆ, Արեւելեան տպարան, 2րդ. Աւշաթ թիւ 110 և ՎԱՌՆԱ. վ. առնայէ դուրս և օտար երկիրներէ պահանջուածներուն իւրաքանչիւրին վրայ պէտք է աւելցնել 20 սանթիմ իբր բօլթայի ծախք:



Կիրակի գիշեր, հաճի Բանագոյի պարտեզը իրարու մօտ նստող երկու ընտանիքներու մէջ հետեւեալ խօսակցութիւնը կ'անցնէր:

Պիստոս հանրմ, Ստամպոյէն նամակ կ'առնէք կոր:

— Քրոջմէս անցած շաբթու հատ մը առինք:

— Ինտո՞ր են եղեր:

— Ինտո՞ր պիտի ըլլան, սիրտերնին կոտրած նստեր են:

— Ինչո՞ւ. կէնէ վա՞ն մի կայ:

— Չէ, անանկ բան չի կայ:

— Աճապա հիւանդութիւն մը պատահեր է:

— Փառք աստուծոյ ատանկ բան ալ չի կայ:

— Բերանս վրայ չերթար կոր ըսելու ամա՛ վախճամ քրոջդ տղան կէնէ բռնեցին տարին:

— Չէ, չէ՛, սատանին անկաճը խուրչին՝ ատանկ բան չէ:

— Է՛յ հապա ի՞նչ է քի...

— Ախ քուրիկս, մտիկ ըրէ քի ըսեմ, գիտես ա՛, քրոջս աղջիկը փառանձեմը նշաներ էինք:

— Գիտենք կոր:

— Չէ՞ք ըսեր, անցած շաբթու նշանը ետ ըրեր են:

— Ինչո՞ւ:

— Մանչը անտար ատեն գնաց եկաւ. հոգի մը ունէր՝ վրան կուտար կոր, հիմա ճայմիչ է եղեր:

— Թրախոմա պիտի տայիք:

— Հի՛չ ատանկ խօսք մը չի կար. իրեր

տարի առաջ քրոջս տղուն, Յակոբիկին անունին գիշերը առ մանչը տուններնիս եկաւ. հէմէն չի հասներ գալու. աղջիկը տեսաւ չի տեսաւ՝ խելքի գլխէն թռուց. թրախոմա մրախոմա չեմ ուզեր ըսեր էր. քուրս ալ երկու հոգիի հարցուցեր էնէ՛ շատ աղէկ տղայ է, ո՞ր օրերնուդ կը նայիք կոր ըսեր են: Ելաւ նշան տուաւ: Ասկէց իրեր ամիս առաջ, կայնէ նայիմ երբ էր...

— Մայրիկ, ալլահալէմ Զատկին էր:

— Չէ, Նոր կիրակին էր,

— Իմ կիտցածս Աշխարհամանտըրային էր:

— Ինչ է նէ, իշթէ ան վախիթները օր մը տուն գացեր ըսեր է քի՛ մէկուն մալ խաբտըրմիչ է ըրեր, ու անոր ասոր պերնովը աղջիկան հօրմէն, էնիշտէս 50 ոսկի ուզեր է, չէ նէ աղջիկը չպիտի առնէ եղեր:

— Իժծուն կտոր ըլլայ պիլէքիմ:

— Քուրս ալ մտնուցեր՝ աստար ատեն գնաց եկաւ, աղջիկան անունը չեղլաւ համար էնիշտէս Ղաղարոս տղան համոզեր հաներ 50 լիրան տուեր է:

— Բէք աղէկ:

— Աւարդեվարին գիմացի կիրակին ալ հարսնիքը ընելու խարար տուեր են. ֆախաթ երկու շաբաթ մնացած խապար է ըրեր քի՛ ծանրը ճէհէզ չեմ ուզեր, թող չինելիք ճէհէզունն փարան ինծի տան: Է՛յ հոգի, աղջիկան ամենական պանը շտկուած է, հիմա անոնք ելլան ծախսն:

— Մեղայ, ատանկ բան կըլլայ:

— Էնիշտէս ալ լսելուն պէս՝ վա՛յ ըսել է քի իմ փարայիս աչք ունի ըսելով նշանը ետ է ըրեր:

— Վէսէլամ:

— Տահան կայ, հիմա ալ արգուհալ է ըրեր տուած փարան ետ առնելու համար:

— Պիստոս հանրմ, հոգերնիդ մի՛ ընէք, խըսմէթ է նէ կէնէ կըլլայ. հէմ կայնէ քեզի բան մը հարցունեմ, մանչը ունեւոր է:

— Նէ՛ մինասիպէթ, սալթ ծառքի զէ-

նահաթը աղէկ է, խառա խույսումձի է, խա-
րարմիչ ըլլայ պիլէքիմ:

— Անանկ է նէ հոգ մի՛ ընէք, ան
քի ծառքը չունի որ ձեր փարան տայ՝ ու-
զէ չուզէ՝ քառնայ պտտի աղջիկը գայ առ-
նէ պիտի:

Մուկէն կերուած

Ի Պոլիս Մաքրիգիւղի մէջ յոյն նպարա-
վաճառի մը աշխերտը՝ Պոտոս Գուլիս 30 չո-
րեքշարթի գիշեր իր քիթը կերցուցեր է չա-
քաձձի մուկի մը, որ կերելի թէ կրծելու ար-
ուեստին մէջ նրբացած մըն է եղեր. զի Պոտոս
իւր բունին մէջ չէ զգացեր մուկին ախաւան-
րըն, այլ առաւօտուն արթնցած ատեն, աւ-
սեր է որ իր քիթին մէկ կողմը չի կա՛յ:

Գիւղացին և Խնդրագիրը

Միամիտ գիւղացի մը, ձեռքը բռնած ա-
ղերսագիր մը, որուն մէջ թափուած էին իր
բոլոր ցաւերը, առաւօտէն ի վեր կը սպասէր
թագաւորին անցնելիք ճամբուն վրայ:

Իրեն ըստած էր թէ՝ պէտք է ջանայ
վեհապետին կառքին մէջ նետելու խնդրագի-
րը, և թէ ասոր համար շատ արթնամիտ ըլ-
լալ հարկաւոր էր:

Յանկարծ արտասովոր իրարանցում սկսաւ
ամփոխին մէջ, հեծելագունդ մը սրարշաւ կըն-
թանար, հ հուրահոնները ողբ կը թնթացնէ-
ին, ամեն ոք գլուխը բացած եռանդագին ցոյ-
ցերու մասնակից էր:

Խեղճ գիւղացին, շուարած, հասկցաւ
թէ վճռական լուպէն հասած էր, հասկցաւ թէ
Ժամանակ էր իր արթնամտութիւնը փայլե-
ցնելու, ու երբ օգոստափառ անցորդը իր ուղ-
ղութեանը հաւաստ, յանկարծ աղերսագրին
տեղ... գլխարկը նետեց կառքին մէջ:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ՊՕՐՃԼՈՒ ՕԼԱՆԼԱՐԸՆ ՃԵՎԱՊԱՐԸ

(Կէյէն նիւսիւնէն)

Սանա տէ՞մէտիմ քի կէլէճէք չարշան-
պա կէլէսին:

Ջաննըմճա՛ ալաճաղընըզ օ գատար չօգ
պիր շէյ տէյիլ տիր. նէ հալ իսէ, կէլէճէք
հաֆթա պիր կիւն կէլ տէ հիսապընա պա-
գալըմ:

Պաղըրըպ չըղըրմագ բարա էտէ՞ր մի.
օլուրսա վէրմէ՞մ. քի՞մ պօրճունու վէրմէք
իսթէմէզ:

Կէլէճէք չարշանպա սաաթ սօգուզտա
կէլ, բարան հաղըր աըր:

Ջիյատէ կէլիյօրսըն, էլինտէն կէլէնի
արգանա գօյմա. փարամ օլտուղու վագըթ
վէրիւրիմ:

Գա՛րտաշ, ագսուլթատա եօգ քի՛ ին-
սան կիւնիւ կիւնիւնէ պօրճունու վէրսին:

Եօգ տէտիք եա՛, ճանըմը՞ մը ալաճագ-
սըն:

Սանա աղնաթտըգ, օլուրսա՛ պիզ կէօն-
տէրիւրիզ:

Սէն պանա պու կիւն պէշ օն ղրուշ
տահա վէր, կէլէճէք հաֆթա հէփսինի պիր-
տէն վէրիւր էլինտէն գուրթուլուրըմ:

Պէնիմ եանըմտա սէնին պէշ փարան
գայպ օլմագ:

Պիր լօգանթատա

Պագսանա՛ կարսօն, պու կէթիւրտիղին
չօրպա նէ՞ սօղու գ:

— Եաննըշընըզ վար միւսիւ, կէթիւ-
տիղիմ վագըթ կայէթ սըճագ իտի:

— Նէտէ՞ն պիլիեօրսըն, տատընա՞ մը
պագտըն:

— Խա՛յըր, եալընըզ բարմաղըմը իշինէ
սօգտում .:

Յ Ա Խ Ե Լ Ո Ւ Ա Տ

Երէք Տիտիկալ տաճկերէն յաւելուածը
Հրատարակեցինք:

ՍՌԱՆՊՕԼՏԱ ՎՈՒԳՈՒԱԹ

Տիւնքիւ կիւն Սթանպօլտան վառնայա
կէլմիշ օլտան պիր միւթէպէր զաթլըն պէյա-
նընի օրէն շարժանպա կիւնիւ էօյլէնտէն
սոնրա քէնպի պիր տօսթու իլէ Վալաթատա
վազը Սրօնիք կաղինօսընտա օթուրմագտա
իքէն Նահէհան շէտիտ պիր բաթլայըլ իշի-
տիրէք պուռա միւթէագիպ՝ բիվօլվէր վէ
թիւֆէնկ սէպէրի տախի իշիտիլիպ՝ տիւ-
քեանլար գաթանըպ գաշան գաշանա օլմուշ
տըր:

Մէրգուլմ իքի զաթլար մէճպուր օլուր-
լար Սրօնիքին իշինտէ պիր գաշ սաաթլար
պէլլէմէյէ: Անճադ, քէնտիլէրի եօլճու օլ-
տուղընտուն տիւքեան սահիպիսինէ. — Գա-
լույու աշ, պիզ եօլճուլըզ, վաբօրա եէ-
թիշէճէիզ — տէյուպ կիւճ հալ իլէ քէնտի-
լէրինի պիր աճէնթէխանէյէ վէ օրաաան տա
վաբօրա թթապիլմիշլէր տիր:

Մէրգուլմար աճէնթայա կերտիլլէրին-
տէ իշիտիլլէր քի վուգուլաթըն սէպէպիյէթի
իքի էրմէնիլէր պանգայա կիրիպ պիր պօմ-
պա աթմալարը օլմուշ տըր:

Մէրգուլմ իքի միւթէճաոիրլէր տէր-
տէսթ օլունմըշլար տըր:

Վաբօր հարաքէթ իթտիղի վազըթ,
իւզէրինէ կէլէն մէզըլըր գուլմընեանըն մուշ
վաբօրընտան խապէր ալլըրլար քի՝ Սթանպօլ
թարաֆընտա պէյիւք բաթըրտըլար հուռու-
լէ կէլմիշ տիր:

Ալտըղըմըլ մէվսուպ հապէրլէրէ կէօրէ
եէվմի մէզըլըրտէ կէնճ թիւրքլէրէ մէնսուպ
250 թալէպէլլէր «Գայսէրի» նամ վաբօր ի-
լէ Սթանպօլտան նէֆօ օլմուշլար տըր:

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Բարիզէն եկած մասնաւոր նամակէ մը
կը տեղեկանանք թէ Միւթիտան խնդրոյն
համար Հնչական կուսակցութեան կողմէ
ի ժընէվ Գաշնակցականաց ղրկուած լիազօր
պատուիրակ Պ. Ճիհանկիւլեանի սա պատաս-
խանը տրուեր է որ՝ Գաշնակցականք սիրա-
յօժար պատրաստ են միանալ սա միակ պայ-
մանաւ որ Պ. Ը. Արփիարեան բացարձա-
կապէս հեռանայ յեղափոխական տապալէ-
ղէն: Պ. Ճիհանկիւլեան այս պատասխանը
առնելով վերադարձեր է ի Բարիզ. և հի-
մա Գաշնակցականք անկէջ գալիք պատաս-
խանին կը սպասեն եղեր:

Եթէ այս տեղեկութիւնները ճիշդ և
մէջ բերուած պատճառներն ալ արգարացի
են, չենք կարծեր որ Հնչականք՝ բժախնդ-
րութիւններով՝ ամէն կողմէ փափագուած մի-
ութիւնը անձնաւորութեան մը համար զոհեն:

Հարց—Պատասխանի

Ի՞նչ է բամբասանքը:

— Ընկերութեանց ամենէն մեծ հան-
գոյցը:

Բաղդը ո՞րկէ կամչնայ:

— Աշխարհս բանի տեղ չի գնողէն:

Ի՞նչ է ողորմութիւնը:

— Աղօթքին քոյրը:

Ի՞նչ է դաստիարակութիւնը:

— Գանձ մը, իսկ աշխատութիւնը անոր
բանալին:

Ի՞նչ է չափաւոր խնայողութիւնը:

— Մեծ եկամուտ մը:

Ճաշէն առաջ չափէ աւելի ոգելից ըմ-
պելի գործածելը ի՞նչ կը նշանակէ:

— Սխալ բանալիով մը սաամոքսը բա-
նալ:

Թարգմ.





Միջնորդ կին մը տղայ մը կը գովէր .
— Ախ ջապ'ը հանըմ, չի գտնուած տղայ
է, իբեք թէրի պէս . ուշարը չի կայ, ու-
թը լեզու կը խօրաթէ...

— Չըսես, խաթըր սօրոսըր կէվէ-
գէին մէկն է եղեր, կը պատասխանէ խօ-
սակիցը:

— 0 —

Գարբուզարը գաշա՞ վերիօրսըն .

— Գարբուզունա կէօրէ, իբի շրուշըրդ
փար 60 փարալըգ փար:

— Շու ալթմըշըրգտան իբի իւշ թա-
նէ ալաճաղըմ աճա՞ էյի չըգմաղսա՞ կերի
կէթիրի փարամը ալըրըմ:

— Օ նէ՞ տէմէք... բիանքօ պիլէթի
ալըպ տա սանա պիր շէյ չըգմաղսա փարանը
կերի՞ մի ալըրսըն:

— Օնու սաթան պիլէմէզ բի վերտիդի
նօմէրօ գաղանըր մը գաղանմաղ մը:

— Էյ պէն պիլի՞րիմ գարբուզարըն
հանկըսը էյի հանկըսը ֆէնա շտուղունը:

— Պիլէճէքսին .

— Նասըլ ,

— Զիրա սանաթըն տըր:

— Էյի եա, պիլէմ պիլէ տիվանէ՞իմ
բի էյիսինի սանա վերիպ ֆէնասընը պանա
ալըգոյայըմ:

— 0 —

Պիր մէյխանէտէ

Օ՛, Գեորգ աղա, շիշէի պէօյիւթմիշին.

— Նէ՞ եաբայըմ, տօթթօր պիր շիշէ-
տէն զիյատէ իշմէյէճէքսին, տէտի:

— Էյի աճա՞ շիշէն եիւզ տիրէմտէն զի-
յատէ տիր:

— Զարար եօգ, էլվէրիւր բի տօթթօ-
րուն էմրի եէրինի պուլտուն:

— Էյ քէնտինի պու գատար էյի պագ-
տըգտան սօնրա հէքիմէ վիլիթա վէրմէնին
նէ՞ եէրի վար:

— Պէնտէ էօյլէ տիւշիւնիւպ՝ տօթթօ-
րուն վիլիթասընը րազըյա վէրիօրըմ,

ՀԱՆԵԼՈՒԿ

թիւ 20

Ի բնէ անխօս ստեղծուած մ'էի,
Ոչ հրեշտակ մ'էի, ոչ մարդ կենդանի,
Սակայն մէկ անգամ աշխարհք զարմացաւ,
Երբ մարդու մը պէս խօսիլս իմացաւ:

—

Թիւ 19 հանելուկն էր ԱԶԲ:

զոր լուծեց միայն Ռուսճուգէն՝ Օրիսրդ Ար-
մէնուհի թորամանեան:

Սիլիսդրէէն՝ Տեար կարապետ Ակաբի կ'տ-
ռաջարկէ հետեւեալը, զոր առաջին լուծողին
պարգեւն է «Բաղդաջոյց Ընտանեկան», անուն
զուարճալի գիրք մը:

ԿՑԵԼԻ ԳԻՐԵՐ

Հետեւեալ չորս բառերուն ամէն մէկին
մէյմէկ գիր կցելու է, անանկ որ՝ չորս նոր բա-
ռեր կաղմուելով՝ կենդանեաց անուններ ըլլան,
ու այն աւելցուած չորս գիրերն ալ ուրիշ կեն-
դանի մը անունն ըլլայ:

Թի — ՊՐԱԿ — ԱՌԱՒ — ԿԱՑԻ



ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Աղտոտած ձեռնոցները մաքրել

Երբ ձեռնոց մը աղտոտի՝ ընդհանրապէս զայն մէկդի կը նետենք իրր անգործածելի բան մը, սակայն ատեն մըն ալ կրնայ գործածուիլ հետեւեալ եղանակաւ մաքրելով:

Առէք հազար կրամ՝ կաթ եւ մէջը լուծեցէք 5 կրամ՝ քառապոնաթ աը սուտ եւ լաթով մը սրբելով ձեռնոցը՝ հսկին դէմ դրէք որ խոնաւութիւնը առնէ:

Երկրորդ կերպ մըն ալ.

Փոշիացած քիչ մը ածառ, 250 կրամ՝ ամօնեագ, 10 կրամ՝ ժաւէլի ջուր եւ 155 կրամ՝ հասարակ ջուր. խառնեցէք այս ամենքը եւ ֆանէլայի կտոր մը թաթիւելով սրբեցէք ձեռնոցը մինչեւ որ մաքրուի:

Աղտոտած թաւիշը մաքրել.

Պարզ ջուր եւ Լիքուր ամօնեագ կոչուած հեղուկը հաւասար չափով իրար խառնելու եւ կակուղ վրձինով մը թաւիշին աղտոտած տեղերն զգուշութեամբ (ոչ թէ ուժով) քսելու է, ու պէտք է թողուլ որ ինքնիրենը չորնայ:

ԱԶԴ

100 Այցաքարտը երկու ֆրանքի կը տպագրուի: Դիմել «Հայելի» խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարին ծախք 30 սանդիմ՝ յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նամակադրօժ կ'ընդունուի:

ԿԱԼՎԱՆԻ ՍԹ

ՕՆՆԻԿ ՄՈՒՐԸՏԵԱՆ

Ամեն տեսակ տպարգական կաղապարներ պատրաստող, նաեւ թէ անձնական եւ

թէ՝ առևտրական կնիքներ: Դիմել ի Վարնա Չիլինկիրէր փողոց թիւ 561:
Գին գոհացուցիչ:

ՄԵՔԵՆԱԹՅՑ ԳՈՐԺԱՐԱՆ

(ՎՈՌԼԱՐԻՊ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ Ե Բ. Է. ԲԱՆԶՈՒՓ

Վառնա Ծրդ թաղ Ելարլ Թապիա

Ամէն տեսակ մեքենաներու, շինութիւն եւ նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով եւ թէ՛ պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շոգեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթեայ գործիքներ, գրամական գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէններ, տեսակ տեսակ ջրհաններ եւայլն եւայլն կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինութիւններէն:

Այցեւորում, հասցէտում. նամակագրութիւն, հրաւիրատում, բարենիշ, տոմարակ, եւայլն եւայլն թէ՛ պարզ եւ թէ՛ ոսկեղօծեալ մէկ քանի գոյներով կը տըպագրուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Դիմել Հաւելիի խըմբագրութեան:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

Ռուսճուգ	Տիարք	Եղբարք	Սարաֆեան:
Սիլիսդրէ	Տիար	Արթաքի	Սարգսեան:
Շսւմլա	"	Յովհաննէս	Մաճարեան:
Սօֆիա	"	Յակոբ	Ծերունեան:
Լոնտոն	"	Հայկ	Ատուածատուր:

Огговоренъ редакторъ: Н. Драгулевъ
Печатница „Взаимность“ — Варна.